

Բ Ո Ւ Ր Է Ս Տ Ե Ն

ՍՈՒՐԲ ՍԸՀԵԿԵԱՆ

1851

Ա. ՏԱՐԻ

ՅՈՒՆՈՒԱՐ

ԹԻՒ 1.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԲԱՆԵՐՈՍՈՒԹԻՒՆ

ԲԱՆ

ԱՌ ՈՒՍՈՒՄՆԱՏԵՆՁ ՊԱՏԱՆԱՅԱՍ

ԶԱՄ ՏԱՐԻՈՅ

“ՇԱՐՀԱՒՈՐ նոր տարի և բարի կաղանդ” . քնն ուրախութեան լուր, քնն ցնծառիթ աւետիս մոնաւանդ երիտասարդ աղանջներու . յիրաւի սիրասնունդ մանկունք, այսօր ուր ալ երթաք, այս ուրախական ձայնս պիտի բաղխէ ձեր լսելիքները, պիտի տեսնէք որ բոլոր մարդիկ այս ուրախական ձայնս կ’անդրադարձեն իրարու . այս ուրախական խօսքովն ժպտող գէտքով մը իրար կը շորհաւորեն նոր տարիիս գալուստը, այս կերպ ուրախառիթ աւետիսներով իրար կը բարեմաղթեն անոր բարի բլրալը . դէմքերն են պիտի հասկընար որ ամենաւն սրտին մէջ ուրախութեան զուարթ

լոյս մը ծագած ու ախած է այս օր ուան առաւօտը, մի օդին անբարեխառնութեանը նայելով բոսմիս վերայ զարմանք յրջուներ, ներքին ու բաբոյական է բաժն լոյս, լոյս որ միայն մտայ ու սրտից խորերը կը թափանցէ :

Երգարեւ բոլոր արիւնջն չափանին մէջ մի միայն ուրախութեան արժանի ճիւղ . տէք է ամենքս ալ ուրախ ու շորհակալ ըլլանք մեր ստեղծողէն բոլոր մեզ յաւիտենականութեան այս դաշտին մէջ ալ կոխելու արժանացունելուն համար . հազար և անհամար փնտք ու շորհակալութիւն անոր, որ մեզի այս տարեգլխաւս ալ ողջ առողջ հասցուց : Քսենի քանկներ արդեօք նախընթաց տարւոյն ընթացքին մէջ իրենց կենացը ճանապարհորդութիւն ընթացքը կնքելոյն . արդարեւ շատերը նաւաբեկ սուղեցան անցած տարւան արեւաստ Սկիւտիսին մէջ . քնն նորէնոր յոյսերով կը շարունակէին իրենց ճամբուն, քնն բարի գործքերու . քնն պատիւներու աղակալութիւն կը վազելին գէտ ի իրենց նպատակ գրքած կէտը, բոլոր չէին գիտեր որ ան ճամբան իրենց գերեզմանը կ’առաջնորդէ . չէին գիտէր որ ան ճամբան իրենց գիմարը անել փոս մը պիտի հանէ, գիտէր արդեօք ճիշտի խորհուրդներ իրենց անկատարութեան վիճակին մէջ մնացին, քնն երեւակա

1 Այս հատը կաղանդին օրը Սուրբ Սահակեան վարժարանիս բոլոր աշակերտներուն ներկայութիւն նը խոսուած բանտխոսութեան օրինակն է . որն որ անոնց հասակակից աղջիկն բոլոր ուրիշ պատանիներու ալ հարգարու նիւթ մը ընկ կը փութամք :

յու թիւներն ու գիտաւորութիւններն
սննդացան, յիսաւի շատերը կը գըտ
նանք որ իրենց օրաւոր կենացը վը
րայ անգամ տպահովութիւն չունեն
նալով սալիներու համար պատրաս
տուած անօրէնութիւններն ու խոր
հաւրդներն ունենին իրենց մօրին մէջը
կամ ձեռքէին զարկած և նոյն իսկ մե
ղի պէս անոնք ալ չի յաւտով կ'ընթա
նային այս կենաց սաստորիկին անհուն
ընդարձակութեանը մէջ, բայց վեր
ջապէս ընկղմեցան յաւիտենականու
թեան անսահման անդունդը, չէին
գիտեր ու անգիտութիւն որ ան տարին
իրենց շիրիմ մը պիտի բլայ :

Բայց սիրելիք, մի կարծէք որ անոնց
ամենն ալ մենեւ դժբաղդ դանուեցան,
մահը գժբաղդ չի կրնար ընել զմօր
գըտ, մարդուս երջանիւթիւնն ալ
թշուառութիւնն ալ իր ձեռքն է,
կը դանուին ալ անոնց մէջ որ մենեւ
չատ երջանիկ եղան, արդարեւ ար
թուէն խոհականութեամբ մը գիտե
լով՝ արանկներուն մէջ ալ երկու
մեծ բաժանում և մեծամեծ տարբե
րութիւններ կը գտնանք իրարմէ շատ
հեռու, մէկը բարի դարձքերով ու
առաքինութեամբ իրենց կեանքը
կնքողները, և միւս՝ ան կէտը տակա
ւին հեռու կարծելով կամ անհոգու
թեամբ անպատրաստ դանուողները,
մէկը կ'ուրախանայ սատանային որո
գայթիներէն չի խորտուած որ յառաջ
բարի գործքերով և տօտքնութեամբ
կանուխիկէ իր յուէժական հանգիս
տը գտնելուն վրայ, իսկ միւսը կը սղ
բայ անխոհեմութեամբ և անզու
շութեամբ իր կարծեցեալ հոնգիստը
կորսնցընելուն վրայ, աղիողորմ աե
սարան : Արեւմտի մը հակադէմ
ալ մատուցանենք հաւատարակչիւ
չի գար այս մեծ շնորհքին, որ մեզի ը
րու մեր բարի արարիչը, այս նոր տա
րիս ալ մեղի ժամանակ պարգեւեց
մեր ընթացիկ ուղղել և առաքինու
թեան ալ ուրիշ բարի արարենք ալ
համարելու մեր յաւիտենականու
թեան շունտարանին մէջը, մեր ճամ
բան ուղիղ ըրաւ դէպ ինոր տար
ւոյս նաւահանդիսոր, ուր անբոյժ

ժամանեցինք առանց նաւարեկութե
մեկ պղտիկ երկիւղի մը կենցաղայս զա
նաղան սպառնալից կոհակները մեզի
խող ընելով, ինչ անկէիւ բարու
թիւն, ինչ անդուգական պարգեւ :

Եւ տարինիս նորեցաւ, ամենայնիւ
ալ նորէն աշխարհք մը եկածի պէս
կ'ուրախանայ, ամեն օրուան սովը
բական դործառնութիւններն ալ
տղատ թող էք տրուած, բայց ինչ
ընել արժան է ձեզի ոյսօր, ոյս ու
րսիութեան տաւրս մէջ, ինչ դե
րագանց դասանք կրնայ ընտրել որ
չահարեր բլայ ձեզի, եկէք, սիրելիք,
ես բան մը պիտի առաջարկեմ ձեզի,
անշուշտ եմ որ ամենուր համար ալ
աղէկ հետեւանքներ սիտի ունենայ,
և մի միոյն տարեկանու յատուկ ըզ
բօտանք մը, բայց անով անշուշտ ձե
նէ շատերը իսկոյն տրամաւթեան պի
տի փոխեն իրենց դրօտանայ ուրախու
թիւնը : Արդ էն ծանոթ էք, սիրելիք,
մարդկանց մէջ տօրութիւն մը կայ,
ամեն մարդ տարեգիտուն հաշիւի կը
նստի, մենք ինչու չի պիտի ունենանք
մեր հաշիւը, մենք ինչու չի պիտի
գիտնանք մեր շահն ու փաստը, եկէք
անգամ մը մենք ալ նստինք տարեկան
հաշիւնիս ընելը, ընդհանուր կշիռը
(պիւնկը) գարնեք բոլոր նախընթաց
տարւոյն ընթացքին մէջ ըրած կամ
կորսնցուցած շահերնիս ու վնասնիս
հասկընանք :

Վիտեմ առ օրուան ոյս հաշուովս
պիտի գտնուին ձեռնէ շտտերը որ շատ
ուրախանան, պիտի գտնուին ալ որ
յանչափս տրամին, այս հաշուովս ձե
նէ անոնք որ առջի տարուան վրայ
չահերնին եւելցած կը տեսնեն մըջափ
պիտի ուրախանան և ալ եւելցընելու
ընան, իսկ անոնք որ ծուրութեամբ
և հեղգութեամբ և տղայական ոչինչ
խաղերով իրենց անգին ժամանակներ
նին փաւ աեղը անցուցեր ու վատնե
րն, մըջափ պիտի տրամին, երանք թե
ըրած վնասներն անճանախ փորձով
նին կարենոյն հասկընալ և ստիկի
ետրը ինքզինքնին ուղղելով, եթէ ան
հասցունէ, հետեւեալ տարեգլուխ
ներուն ինդ ումերեւ հանգիստանալու

Յանք ընէին : Վէտք է ըստ մասներ
նույ՛ք վրայ արտախր : բայց երբէք չի
յուսահատիր , ոյլ արիանտլով անոր
կրկնապատիկը այս նոր տարւոյս մէջ
շահելու ըսնաք . ձեր այս գարնանա-
յին հատակին անգիւտ ժամերը շաշ-
լու թեամբ , չի վատնէր , խնայէք մին-
չեւ մեկ երկվայրկեանին տնդամ :

Ժամանակը գին չունի սիրելիք ,
բոլոր աշխարհքիս հարստութիւննե-
րն ալ բաւական չեն անոր մէկ վայր-
կեանը անդամ գնել կամ ետ դարձու-
նելու . գացածը պացած է , ձեռքի
եղածին յարգը դիտնալով փուռ տե-
ղը ձեռքէ չի հանելն է ճշմարիտ խե-
լացիութիւնը . մի կարծէք որ միշտ
տատնկ ձեր գարուն հատակին մէջ ուի-
տի մնոր տատնկ փթթած ու գոյնըդ
պոյն ծաղկներով զարդարուած . այս
գարնան հեռոգհեռէ ամառը , աշու-
նը , և վերջապէս սրբուր ծեր ձմեռն
ալ կուգայ , նայեցէք որ այս ձեր ծաղ-
կըները հասուն որոտ զներ ընէր , որ
կենսատու տարէններ ըլլան ձեզի , ձեր
ծերութեան յուրս հովելը փլած ժա-
մանակը . երանի ան մտքին ու սրտին
որուն մէջ որ կանուխ անկեցաւ այս
սրանկելի խորհուրդներս :

Հասակնուդ յարգը գիտցէք , հը-
րեշտակային հասակ մըն է այս հոտա-
կըս . դուք ձեր անձին սեփհական
քնէ կրնաք վաստակիլ նէ այս հոտա-
կիս մէջ պիտի վաստակիք թէ ճշմարիտ
բարոյականութիւն և թէ հոտա-
տուն գիտութիւններ , ասանք պիտի
մնան ձեր հօգիէն ու մարմինէն մըշ-
արնջենաւոր անքակաւի . աս երկու-
քէս զատ բոլոր ընելիք վաստակներ
նիդ ալ անկայուն ու խաբիտու էն ,
փողը դուք ալ անշուշտ ուրիշներուն
պէս ուշխարհային դրաղմունքներու
տակ ընկծած ու ճնշուած , թէտէտ
կ'ուզէր ան ատենը այս ձեր ամենա-
հարկաւոր պէտքերը ձեռք բերել ,
բայց հիմակուան ժամու մը մէջ ստա-
նայեքնիդ ան տտենք տոխներով բա-
ւական չէք ըլլաք ձեռք բերելու . թէ
և հիմակուան անհպաւններնուդ վրայ
յանչափօ ցաւած անհարկն աշխա-
տութիւն ալ յանձն կ'առնուք , բայց

գրեթէ կը շահիք և ոչինչ . հիմա որ
դուք գրեթէ տակաւին մանկութեան
կամ լու ևս ըսեմ պատանեկութեան
վարագոյրով ծածկուած էք , կամ
ոմանր դեռ նոր զանի թոթովելով ,
հաղիւ թէ երիտասարդութեան գրա-
նը մտեցած , անշուշտ պիտի դայ
ժամանակ որ տա տարիքնիդ շատ փոն-
տրո էք , բայց անհատք է ձեզի կրկին
ձեռք ձգել . ալ այնուհետեւ կ'ըսկը-
սիք ձեր օրինակաւն ու փորձովը ու-
րիշները խրատել . ինչպէս հիմա մենք
ձեզի . հիմա որ չքոհմ ամենուդ ,
չատերուդ ասորին երկան կամ դար
կը թուի , կ'ուզէք շուտ շուտ ասորին
նորոգուել և նորէ նոր յնծաւթեան
տաներ ճնանիլ , բայց պիտի գայ ժա-
մանակ ուր տարին ձեզի իբր վայրկե-
նական կէտ մը պիտի թուի , տրագ
նորոգութենէն պիտի ձանձրանայր ու
դանդաղիք , ձեր այս հոտակին ամեն
մէկ վայրկեանը հաղուսպիւտ դան-
ձեր պիտի թուին ձեր աչացը : Արկին
ըսեմ փափագելի է այս ձեր հոտակը :

Այս հատակնիդ է ձեր բոլոր ա-
պագայ վայելելիք կենացը փորձաքա-
րը , բոլոր ապագայ յոյսերնուդ և ա-
կընկալութիւններնուդ հիմը այս հա-
սակիս մէջ պիտի ձգէք , այս հոտակիս
մէջ պիտի սերմանէր ինչ արդասիր որ
կ'ուզէք վայելել ձեր ասորույ ուրիշ
հասակներուն մէջ . այս հատակնուդ
մէջ մի ծուլանայր ձեր թէ հոգւոյն և
թէ մարմնոյն պէտք ըլլալիք տարէններն
ու ապրանքները ձեռք ձգելու , որանք
հեռոգհեռէ քօնի հիմնուն այնչափ պի-
տի աճին ու յարգի երեւնան . մեկ
խօսքով , այս հոտակիս մէջ միայն կըր-
նայ տղայ մը դաստիարակուելու ու սը-
նանիլ մարդկային սեռիս ամենահար-
կաւոր երկու վիճակ որ անուշեղներով ,
ճշմարիտ բարոյականութեամբ և ու-
րու մնականութեամբ . որոնք մինչեւ
ծերութեան ժամանակնիդ ալ երկու
հաստատուն նեցուկներ և դուազան-
ներ եղած ձեր երկու ձեռքաւորները
հանգիստ պիտի տաւջնարդէն զձեզ
անշուշտ թէ հոգիսիդ և թէ մարմին-
նիդ մինչեւ ձեր յաւիտենականու-
թեան հանգիստը , և մինչեւ մահ

ուրնէդ եւքն ալ զձեզ տնուամբ պիւ
տի անմահայնէն մարդկային ընկերու-
թեանը մինչեւ էն բարձր կաճառնե-
րուն մէջ ալ. միայն տա երկուքին միջ-
նորդութեամբը պիտի կրնաք հայրեն-
եացդ ու տղային ալ հարապատ և ար-
ժանաւոր զաւակներ ըսուիլ և անոնց
երեւելի բարկներ ընել. աղգտա-
րութեան, հայրենասիրութեան, ու
սոսմանականութեան և ճշմարիտ բա-
րոյակնութեան անմահ անուններ
տառնալ ու փառաւորուիլ. արդարեւ
առանկներն են մարդկային սեռիս մէջ
իրաւապէս մարդ ըսուելու արժանա-
ւոր անձիքը :

Տարին կը նորի, կողանդ, ծնունդ,
զատիկ և ալ ասոնց պէս ուրախու-
թեան ու պիծութեան տօներ իրար
կը յաջորդեն. բայց գիտնաք սիրելի
որ անոնց ամեն մէկուն նորագմանը
կեանքն ընտզ բաղկացուցիչ մասունք-
ներուն մէկն ալ պակսեցաւ. ամեն
ուրախութեան և պիծութեան վայելչու-
ներնիս ալ կ'անցնին. բարի գործքն
ու առաքինի վարքն է գովելին ու
մնայունը : Այն խի առ ուսման տու-
նարիս մէջ ձեզի հեռ իմաստութեան
սեղանիս սեղանակից գտնուողներուն
վրայ կրնաք փորձել. այս օրուան օր
շատերը կը գանանք որ տնձամբ պակ-
սած են ձեր ընկերութենէն. կան ու
սոնց մէջ որ թէ և ապրիներ յառաջ
ըսած են իրենց չուն աս աշխրբէս,
բայց անոնց անուններն ու յիշատա-
կը միշտ պտղութեամբ ու փափաքու-
նոր կը յիշուին ձեր ամենէն սիրելի
ժողովներուն մէջ ալ. բայց կան ալ
որ թէ և մարմիննին տակաւին փտու-
թեան չէ սկըսած, բայց անոնց յիշա-
տակը հազարաւոր տարիէ 'ի վեր պակ-
սածի պէս ձեր յիշողութենէն 'ի ըս-
տառ ջնջուած ու մոռցուած է : Ան-
շուշտ առջիններուն բարի վարմունքը
և առաքինի ընթացքն է ձեզի այս բա-
նը ընել տուողը և ետքիններուն ան-
պատէճ վարքը և ծոյլ ուսումնասե-
ցութիւնը :

Արեւն քանի որ ժամանակնիդ
ձեռքերնիդ է, մի վրէժ տեղը անցու-
նէք. ջանադէք որ օրէ օր սւտումնա-

կանու թեոն և բարի խրթութեան
ճամբուն մէջ աղէկ սնունդ ու բարի
գործքեր ձեռք բերելով. ժամանա-
կին քանի որ կենդանի էք կարենաք
աղղին և և կեղեցւոյս պիտանի ան-
դամներ բոլոր, հայրենիքնիդ զձեզ իւր
ծոյր կրելէն ծանրութիւն չիմանոյ
ու չի ցուի, մանաւանդ թէ անձիւ-
նոր փափաքի, և երբ կեանքերնիդ
վճարէք յաւիտենականութեան ան-
ստիճան փառացի արժանացած, դա-
րերուն անյաղթելի կոթողներուն վը-
րայ ձեր բարի անուններն ու յիշա-
տակը ձեր ձեռքովք քանդակելով ձեր
սողադայներուն ալ բարի օրինակներ
հանդիսանաք : Այնպէս քանի տարին
նորի՝ այս կերպ խորհուրդներուս խոր-
հրդածութիւնն ալ ոչ այք է նորոգ-
ուին ու նոր արմատներ կապելով ևս
առաւել արմատանալ ու հաստատ
ուին ձեր մատաղ մտքին ու սրտերուն
մէջը՝ և իրաւապէս ասանք պիտի ըլ-
լան ամեն տարեներին կամ կազանդին
որք բարի ընելիք գործքերնիդ ու խոր-
հրդածութիւննիդ և սցառ պատանիի
մը համար ճշմարիտ ուրախութիւնն
ու յիծութիւնը :

ԲԱՆԵՍՏԵՂՈՒԹԻՒՆ

ԱՌԼԿ

ԿԱՊԵՒ ԵՒ ԱՂՈՒԵՍ

ԵՂՈՂԱՎ քրին կենդանիներն
մէկ գեղեցիկ դաշտի մէջ,
խորհուրդ ընել իրարու հեռ
թէ ո՞վ ընտրեն իրենց մեծ.
Հան կապիկը կը խենդենաւոր
որ ինքն ըլլայ թաղաւոր,
Անոր համար խաղ հնարեց
ճախտար ու խիտ մտաւոր :
Ենանի աղաւոր զարմանալի
վարպետութեամբ մը խաղաց :
Որ յիրաւի հաճոյ եղաւ
հոն տեղ եղող կենդանեաց :
Եյսպէս ահա շար կապիկը
որսաց բոլոր սիրտերը :

Եւ այս կերպով իրեն ինկաւ
 իշխանութեան վնճակը :
 Բայց խորագետ հին ազուէսը
 որ քաջ գիտէր այն դուռը ,
 Թէ խաբէբայ հնարքով մը
 իրեն քաշեց այն փառքը :
 Չէր ուզէր որ շար կապիկը
 այս ձեւերով ընդունէ ,
 Այն դորուոր տէրութիւնը
 և ամենաւն ինքն իշխէ :
 Աստի կ'ըսէր ինքն իր սրտէն
 մէկ սրագայիմ մը լարիմ ,
 « Անդամը դաւով բռնեմ
 անկից վրէժըս առնեմ » :
 Եւս ըսելով մօտ կը կանգնէ
 սզորմէն կապիկը ,
 Ար չէր գիտէր պարզմտութեամբ
 իրեն գլխուն գալիքը :
 Յըսուց անոր այն մեծ փոսը
 որ իր համար շինած էր ,
 Տերեւներով և յարգերով
 անոր վրայ ծածկած էր :
 Բոտ անոր « Տէր դուն գիտես
 որ գտած եմ անդամք որ ,
 « Այս ծակիս մէջ փորած ամեն
 ոսկի արծաթ բիւրաւոր :
 « Հիմա ինչպէս անբութիւնը
 որ ամենէն քաջ գիտէ ,
 « Եթէ ինչ որ գանձ դանուի
 թագաւորը զայն կ'առնէ :
 « Արա՛հեաւու դու ես մեզի
 թագաւոր տէր և իշխան ,
 « Քեզ կը փայլէ ոչ ուրիշին
 պահանջելու ինձմէ զայն » :
 Եւս խաբէբայ խօսքերովս
 շուտ խաբուեցաւ կապիկը ,
 Աւրախութեամբ և խնդութեամբ
 ցատկեց անկէ փոսիկը :
 Բայց ոչ միայն թէ չի գտու
 այն որ ինքը կը խնդրէր ,
 Հապա ինկաւ որոգայթը
 որ ազուէսը լարած էր :
 Կըքոր տեսաւ հին աղուէսը
 անոր այսպէս խնալը ,
 Կը ծիծաղէր անոր վրայ
 ու կը զուլցէր առ խօսքը :
 « Ինչք՞ դու յիմար ինչպէս կրնաս
 ուրիշներուն տէր ըլլալ ,
 « Երբ չես գիտեր ինչպէս պէտք ես
 դուն քու անձինք զգոյշ կալ » :

Երանկ անփորձ ի՞նչ կապիկներ
 ի՞նչ անխորհուրդ մարդիկներ ,
 Դեռ ինքզինքնին կառավարեն
 հրակէին ի՞նչ է չին գիտեր ,
 Բայց փառասէր մարութիւնով մ'
 կ'ուզէն այլոց մեծ ըլլալ ,
 Իրենց աս կերպ սուր դժուարմով
 անոնց բարի մըտմտալ :

Յսկորոս Աշոտ Դ-երդեան :

ԵՐԳ ՄԱՆԿԱՆՑ

Ի ՆՈՐ ՏԱՐԻ

Բարով Եկար նոր տարի ,
 Կարուտորդ ըլլայ բարի ,
 Տէր մեր Աստուած բարերար ,
 Քեզ վերորհնեմք անդադար ,
 Տուր մեզ դու միայ բանական ,
 Զսիւք ծըծել գիտութեան ,
 Եւ քոյր ուղիղ ի շաւղայ
 Չըլլալ երբէք մոլորած :
 Եւ ջն տարուանս ճամբուն մէջ ,
 Թէ թեքեցոնք ներքէ մեզ ,
 Աս նոր տարին պատրաստե՛
 Ըլլալ մեզի շահաբեր ,
 Եւ առւր մեզ դու մաքուր սիրտ ,
 Դէմ չի գործել քու կամքիդ :

ԲԱՐՈՅԱՎԷՊ

Բոբինձէյ իշխանին Երանկոսիւն Բընդ
 ռէլու ճամբորդութիւնը :

ԱՐԻՒՅ տարիի չափ յառաջ այս
 իշխանին հայրը մեծ թագաւոր մըն էր
 Երանկ հեռաւոր կալմերը իր ընդար
 ձակ պարտորդ սկիւպատ աշտարակներ
 ունէր , իր սենեակներէն ոմանք ու
 կիով և ոմանք ալ արծաթով պատած
 էին , և այնչափ գեղեցիկ՝ որչափ որ
 մարդկային կարողութիւնը կըքմար յօ
 ըրնէլ , գիշերները տառը հապար կան
 թեղ կը վառէր պալատին մէջն ու բւ
 լորովքը , երամիշաները օդը կը թըն
 տացունէին և անուշ անուշ հոտերը
 զեփեւսին հետ խառնուած կը տա
 բուրերէին պալատին ամեն կողմը :

Այս հոյակապ պարտիա բոլորակբը եղած երկիրները բնութեան և արհեստին գեղեցիկութեամբը կը փայլէին, հոս զանազան պարտէզներ կային, և մանր պտուղք և սմանք ալ ծաղկանց համար, և անդ ալ կար որ բոլորովին վարդերու պարտէզներ էին: Աս դա հողան կլինաներու տակ բուսած գեղեցիկ ծաղկներէն կը վանուէին. և մանր ձերմակ, տմանք կարմիր և ամանք ալ բազմապէս: (Թէ որ ժամերով այս տեղերս սրտըտէիր ուրիշ բան չիպիտի տեսնայիր ու գգայիր, բայց միայն վարդ և զով ու անուշ օդ: Այս տեղիս մօտ էին շուշանի և վարդի պարտէզները, սրանց գեղեցիկութիւնը մօրէ դուրս բան մըն էր, կակայի և ուրիշ ծաղկներու պարտէզներուն համեմբը չկար: Ատն անանկ պարտէզներ ալ կային՝ ուր ծառերը պտուղով կը հեծէին. խաղողը, գեղձը, ծիրանը, և ալ տանց պէս քաղցրահամ պտուղները իրենց առատութեամբը և համեղութեամբը ամեն հեշտութիւն կը մատակարարէին:

Այս նաև խոշոր անտառներ, հովանաւոր ծառերներ, երկար մուսքեր և շողշուղուն լիճեր, որոնց վրայ ձիւնի պէս ձերմակ կարապներ կը լողային, կար նաև խորին քարայրներ փայլուն քարերով ձևացած, անանկ զով առանկ յուս՝ որ կարծես թէ աներեւոյթ ոգիներու բնակարաններ էին:

Այս պարտիան և այս գեղեցիկ տեսարաններուն մէջ Ռօբինձէյ իշխանը իր անշուքութեան օրերը կ'անցընէր. իր հայրը իրեն վրայ ամեն ինչով կը տունէր, և իր որդին ամեն ուղածները կը կատարէր: Իշխանը մեծաքոյ և անդամաւորներով զարդարուած հանդերձներ կը հագնէր, բնութեան և արհեստին շնորհած նիւթերովը հացկերոյթներ կ'ընէր, և բոլորովին եղած ծառաները իր ուղածները շուտով կը կատարէին:

Բայց քիչ մը ժամանակէն ետքը քանի որ հասունութեան հասակը մտակցաւ Ռօբինձէյ իշխանը սկսաւ անհանդիսաբար: Ինքը ձանձրացաւ վարդին սպարտէզներէն, լճերէն և կարապներէն:

այրերը, հովանաւոր ծառաները, զուարճալի ձեմեղքները մինչեւ անգամ պտուղ տալին չէր երևնար, հոյակապ արահները, երած շուքութիւնները, անուշահոտ բաները, լուսաւորութիւնները, պարերը, երգերը, հանգեսները զինքը չէին ուրախացրին. կամաց կամաց սկսաւ մարդկանց ընկերութենէն ալ ետ քաշուիլ, և իր ծառայներէն շատերը իր քովէն ձամբեց. ան առարկաները որ զինքը տախներով ու տարիներով կը զուարճացրնէին, ալ այնուհետեւ հաճութեան նշող մըն ալ չէին կրնար զգուհել առնոր վրայ:

Այս կերպով սկսաւ մինակ անտառներուն խորին լուսութեւ մէջ թափառիլ, և ամեն մէկ երեւելի զօտանքներու մէջ ինքը զինքը ապերջանիկ կը համարէր: Հասկ կը սիրէր գետերուն եղերները ժուռ գալ, և անտառներուն հովանաւոր անդերը զօտնուլ, և ժամերով այրերուն խառններուն մէջ առանձնացած նստիլ: Այս վերջինը իրեն ամենահաճելի անգն էր. անտառները կանուխ հոս կուգար, և մէկ տեղէն մէկուր ելթարով իր ժամանակները այս ստակալի և վայրենի բուրդներուն մէջ կ'անցընէր:

Թէպէտ ինքը այս առանձնութեան մէջ շատ խաղաղութիւն գտաւ, բայց գեւ իր սիրտը անհանգիստ էր. իր սիրտը այնպէս ելած էր որ իր շրթանները դողալով ըսաւ, «Աս տակաւին անհանգիստ եմ»: Այս խոսքը լսելուն ելուն պէս այրին խորին տեղերէն մէկ քաղցր ձայն մը եկաւ իրեն ըսելով թէ, «Նիրաւի ապերջանիկ»: Իշխանը անսնարով որ մինակ էր՝ ըսաւ թափելով մը, «Ո՛ր ես դուն», որուն պատասխան եկաւ թէ «Ո՛ր ես դուն»: «Աս եկուր» ըսաւ իշխանը հրամայելով մը, և սո մի և նոյն բառը երբ անգամ կրկնուեցաւ այրին խորունկ տեղերէն: Այս խոսքերը պատանիին սրտին եփէջը ազդեց, և տունը իբր իրեն հրաման մը սեպելով ոտքի վրայ ելաւ, և սկսաւ ձայնին եկած տեղը ելթալ. երբոր այրին մէկ սենեակէն միւսը կ'անցնէր, իրեն անանկ կուգար

որ դեռ ձայնը կը կրկնուէր, որ կը սէր թէ « Հոս է կու, հոս է կու, հոս է կու » : Տանի որ սառաջ կ'երթար իր առջեւը նորանոր սենեակներ կ'երէր որ տալիներէն աւելի լուսուտ էին, և երթալով լուսաւորութիւնը կ'աւելնար : Եսանցմէ շատը իր հօրը պաշտօնն սովորէ և արժաթէ կոնթէյնէրով լուսաւորուած սենեակներէն ալ աւելի լուսուտ որ փառաւոր էին :

Այս անսարսնեւորուն գեղեցիկութենէն զուարճացած և այս հեռուէն լուսած մեղմուկ ձայնէն հրապուրուած որ դեռ կը խոսէր, իշխանը ըսկըսաւ դէպի հոն երթալ : Արքեմի կանգնած կը նայէր այն անդամանդներուն, յակիմթիներուն, զմրութաներուն, սրոնք այրին քովերը և ձեղուններուն փայլ կը փայլէին, երբեմն պատանին կը ծռէր դեմին փայլած քահարանիէն կ'աւելէր, որոնք աստղերու կտորուանքի պէս կը փայլէին, երբեմն կը կենար և կը գիտէր սրտէս թէ հարած անգամանդներէ ձեւացած լիճերը՝ որոնց մէջ իր բարբաթը եղած առարկաները անդրադարձած կ'երևնային : Բանի որ կ'երթար քիչ քիչ փայլունութիւնը կ'աւելնար, արձու դանդները առաւել քաղցր կը լսուէին, անուշ հոտերը օդը կը լեցունէին, և ամառուան քաղցրօշունչ գեփուները այս երիտասարդին շրթունքները իր թէ կը համբուրէին, վերջապէս ամեն անսարան գեղեցիկութեամբ և զմայլմամբ լեցունած էին : « Այս շատ զմայլելի բան է » ըսաւ իշխանը, և այս խորհրդով սկսաւ ուրախանալ, և սկսաւ կամաց կամաց պարտախել, և միայն դրաւ որ մէյժալ սովէ չեղէ :

Ճամանակը կ'անցնէր և իշխանը դէս ինքրզինքը երջանիկ կը համարէր, բայց կամաց կամաց երեկոյեան սոցոս մթութիւնը սկսաւ որ գիշերուան աղբամաղը կը կարագեանէր և քիչ քիչ իր քովի եղած տեսարանները սկսաւ իրենց գեղեցիկութիւնները կորսնցնել, ալ որ և իցէ գեղեցիկութի մը իր աչքին չէր երևնար, և այն խիստ փայլունութիւնները սկսան իր աչքերը խափրտացունել, անգամանգ

ները, յակիմթները, շափուղաները ալ իրեն հաճելի չէին երևար : « Աւագ » ըսաւ ինքնիրեն, « տախտակ երջանկութիւն չէ եղեր, ես առաջուց գիտեմ որ շքեղութիւնը խաղաղութի չի բերէր, այս նիւթերը թէն կըրնան համեցունել իմ զգայարաններս, բայց իմ սրտիս մէջ բան մը կայ որ աւմենին յագենալիք չունի, իմ հոգիս դահարներէ և անգամանդներէ ի դատուելի բանի մը կը փափագի : Այլանկալութիւնը սուրի մը ըլլալու է, չէնէ ինչո՞ւ ես անոր ասանկ պիտի փափամ : Արքեմը որ ստեղծեր է մարմնոյն անսթութիւնը և ծարաւութիւնը, հրաման տուեր է, երկրին միանգամայն կերտելուր տալու և ջուր հանելու, որպէս զի այս պիտայքները հողացուն : Արքեմը որ դարդարեր է հոգին մեծ ու բարձր փափագներով, հարկաւ զանոնք խաղաղացունելու միջոցներն ալ պատրաստած պիտի ըլլայ : Ե՛հ, իմ փափագներուս յարմար սնման հութեան պտուղները ո՞ւր պիտի գտնուամ » : Հիմա իշխանը խորին կերպով կը մտածէր, և վերջապէս իր ընելիքին վրայօր խորհելու ատենը, երոմ շատութիւնը դուրեցաւ և այրին հեռու կողմէն յոյս մը տեսնուեցաւ որ դէպի իրեն կը մօտենար : Աս կ'երևար թէ իրեն հասակակից մէկն էր՝ կտաւեպարզ զգեստ մը հագած երկան քրդանցքներով : Արքեմ շատ մօտեցաւ իշխանը իրեն հարցուց. « Սիրելի մանուկ մի՞ ես դուն, և ուսկից կուգաս » : Ինծի արդիլուած է իմ անունս ըսել » պատասխանեց պատանին : « միայն սա ըսեմ քեզի որ ես հոս խորհուեցայ քու ուղածներդ հոյսըներու և քու փափագներդ լեցունելու, հիմա ուղեւորդ բո՛ւ ինծի » :

« Այլանկալութիւնը ցրցուր ինծի », ըսաւ իշխանը, « և սորվեցուր ինծի նոն թէ ինչպէս կրնամ ձեռք բերել զոնի » : « Հիմա դուն ինծի հետ կուգաս », ըսաւ անեղեւթ պտուղամուտը : « դուն զմտազան կլիմաներ և երկիրներ պիտի տեսնաս, պիտի տեսնաս նաև հարուստն և աղքատը, երիտասարդը և ծերը, խնամուներ և

յիմարը, երբոր երջանկու թիւնը գլու-
նալու ըլլանք անասունը անոր ուր գլու-
նուիլը պիտի գիտնայ, և զանի ձեռք
ձգելու միջոցները կրցնաս 'ի դորձ գլ-
նեղդ: Իշխանի շատ ուրախացաւ այս
առաջարկութեանը վրայ, և խնայն
փափարեցաւ պատգամաւորին ջրցու-
ցած ճամբուն մէջ մտնալ, խնայն ա-
նոր երկու հատ թիւեր արուեցաւ, և
մի և նոյն երեւակայութեամբ սկսաւ
դէպ 'ի օգը բարձրանալ իր երկտու
սարդ պատգամաւորին հետ մէկ տեղ:
Այս թեւեաւոր ճանապարհորդներուն
աչքէն սկսան քարայրին այն բարձր մա-
սերը ու կամորձերը աներեւոյթ ըլլող
և այս կերպով իրենց օգաշու ճանա-
պարհորդութիւնը եղ մը շարունակե-
լէն ետեւ մէկէն 'ի մէկ ինքզինքնին ա-
ռաւծաւեան տայծաւ արեւէն ըւստ
ւորեալ դաշտի մը վրայ գտան:

Իշխանը շատ կը դուստրմանար այս
իր տեսած երեւոյթներէն, և կը փա-
փարէր զանոնք մօտէն նկատելու: Օ-
գապնայ ճանապարհորդները գէպ 'ի
երկիր սկսան իջնալ, որպէս զի ամեն
բուն պարզապէս կարենան տեսնել:
Սէկ բլուրի մը վրայ հովիւ մը տեսան,
որ իր հօտը կ'արածէր, այս մարդը
խօսին վրայ նստած կարծես թէ կը
մտածէր, հաստ հանդերձ մը հագած
էր՝ բայց մարտը և հանգիստ և մտքի
հանգարտութիւն մը կը փայլէր իր
դէմքին վրայ: Ոչխարները որ հազարի
շուք կային, իր բոլորովեք կ'արածէին,
և պզտի գառնուկները դաշտին մէջ
առգիտ անդին կը ցամկուտէին: Աս
մէկ հաճոյական տեսարան մըն էր, և
պատգամաւորը առաջարկեց իշխանին
որ հորցունէ անոր թէ արդեօք եր-
ջանի՞կ է ան: «Այ, ոչ», պատասխա-
նեց Իօբինձէյ, «Այս մէկ իշխան մըն
էմ և ինձի պզտիկութիւն է ազբատ
և ծեր հովուի մը խորհուրդ հարցու-
նելը»: Այս երկուքը սկսան նորէն
թուլիլ, ուրիշ տեղ մը տեսան մէկ երկ-
րագործ մը որ իր արտը կը հերկէր,
անոր տունը որ մօտն էր սեւի ներ-
կուած էր, բայց հաճելի գոյն մը ու-
նէր: Իր շտեմարանին բոլորովեք շատ
արջաւանք և տեղ տեղ խոտեր կային,

և շատ մը տղար տանը դռանը առջին
կը խաղային, ազտիւնները կոկորը կը
կլմէին, և հաւերը կը կարկաչէին:


«Ամա կայնիք և երկրորդորձին
հետ խօսի՛ք մի ո՛րաւ պատգամա-
ւոր: Բայց իշխանը իր գլուխը երեւ-
ցուց չէ՛ լսելով, և տնցան դաշին.
քիչ մամանակէն ետքը հաստն մէկ
թուի շէնքի մը քով, և ծռած պա-
տուհունէն ներս նայեցան, թէ և ա-
սիկայ քաղաքավարութեան գէմբուն
մըն էր բայց իշխանները և ողիները
երբեմն ասանկ սովորութիւն չեղած
բաներ ալ կ'ընէին. տունը ներսիցին
տեսան մէկ ծեր կին մը ամօռի մը
վրայ նստած սպիտակ մազերով և կանճ
մըտած երեսով: Սէնեակին մէջ կա-
յին սասն երկու մանչ և աղջիկ մանք
տղտքներ, որոնցմէ մէկուն ծեր կինը
կարգալ կը օտովեցնէր: Սմուկը որ
շատ պզտիկ էր՝ ահարկին ջանք մը կը
ցրցունէր. « Բ. Գ. գիրերը արաւ-
սանելու, ու ծեր կինը կը ինքտը պըզ-
տիկ մանուկին այս գիրերը ուրտաւ
նելու համար թափած ջանքին վրայ:
«Իսկե՛ս որ ներս մտնանք ո՛ հարցուց
պատգամաւորը. «Այ ո՛չ պատասխան
տուաւ իշխանը, « վասն զի ես արդէն
գիրերս սորված եմ, և մէկ ծեր կին
մը ինձի բուն մը չի կրնար սորվեցնել»:

(Աւարդն 'ի կէտերդին)

Թարգ. Նազարէթ Արմենակ Կարապետեան:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԱԳԻՐՈՒԹԻՒՆ



ԱՄԵՐԻԿԱՅԻ ՎԱՅՔԵՆՆԵՐՈՒՆ ԲԱՐՔԸ

Ամերիկայի ազգայն մէջ պատահած ան-
դադար թշուառութեանց պատճառը
շահախնդրութիւնը չէ, հապա վրէժ-
խնդրութեան կիրքն է որ անոնց սը-
տին մէջ արմատացած է 'ի ծննդէնէ:
աս վրէժխնդրութեան փափայրը իրենց
փափարներուն մէջ առաջինն է, և գը-
րեթէ իրենց տղոցը մտայնը մէջ իրը

միայնակ կրթութեան սկզբունքը կը տալաւ որեւէ : Այս փափագը մարդկային կիրքէ մը ելելէ կենդանիի մը բընական կատարութեանը կը վերաբերի, թէ որ դիպուածով քարէ մը վընաստէին շատ անգամ շտիպողանց կատարութեամբ կ'առնէին զանկիայ և կը ջանան իրենց վրէժը անկէ առնելու գեանէ գետին զոյններով : Թէ որ պատերազմի մէջ նեղէ մը զարնուին՝ վերջին մէջէն անկիայ կը քաշեն կը հանեն, և իրենց ակումներովը կը խառնեն կը կտրտեն ու գետինը կը զարնեն :

Թշնամիներնուն վրայ ունեցած վերջմտեղութիւններնուն կատարութեանը սահման չի կայ : աս կրկն զօրութիւնը անանկ աղէկ գիտեն ու նոնք որ անով միշտ իրենց մարդիկը կը գրգռեն զէնք առնելու : « Մեր ընկերներուն սկզբները տակաւին բացը դրած են, և անոնց սրբաւնտ անկողիները դեռ չեն լուացուած : անոնց սկիները մեզի գէժ կ'աղաղակեն ու կը բողբոջեն և զանոնք խաղաղացը ներս միջոցը մի միայն վրէժմտեղութիւնն է, կրտեն : և կէք զանոնք բռնապանակ ժողովուրդը երկմանք կտրտենք, կոյիներով վերաւցէք, մեռեալներուն սգիները միմիջարեցէք, և ըսէք անոնց որ ձեր վրէժը մեզը պիտի առնենք » : ասանկ յորդորանքներէ սիրտ առած Երեսասարգները իրենց զէնքերը կատարութեամբ կ'առնեն և անհամբերութեամբ բռնկած զանոնք իրենց թշնամիներնուն արիւնիին մէջ թաթխել կը ջանան : Թէ որ թշնամին անդատարաստ գոնան վերջին տոտիճանի կատարութեամբ կը յարձակին անոնց վրայ և իրենց կատարութեանը զոհ ըլլողներուն գլխուն սկաւառակները հանելով՝ մեծ յաղթանակով այս յաղթեալ օտարականները առնենքին կը տանին : Շատ փափաղ ունին մարդիկ իրենց գերի ընելու : Թէ որ անվնաս տեղի բնին հասնելու ըլլան : ան ոտները գերիները՝ ազատ կ'ըլլան նախապիքէ : և քիչ կամ շատ մարդկութեամբ կը վարուին անոնց հետ, թէ և մեծ շղթաւութեամբ անոնց վրայ

կը հակեն : Իրենց սուհմանագլուխը հասածնուն պէս պատողամբ կը խորհեն քաղաքացիներնուն որ աւետեալ անոնց իրենց յաղթութիւնը, և ան անոնք գերիները կ'ըստին իրենց վիճակին թշուառութիւնը զրալ :

Կնիկները իրենց զաւկներովը մէկ տեղ որոնք տակաւին զէնք գործածելու կարող չեն, կը ժողովին և երկու կարգ կը շարուին որոնց մէջէն գերիները կ'անցնին, և անոնց ժամանակին անգութ կերպով մը քարով ու գաւազանով կը զարնեն, իրենց այս առաջին կատարութեան գործքէն ետքը պատերազմի մէջ մեռնող երկրացիներնուն մահը կ'ըստին սղալ անանկ խօսքերով ու ձեռքի շարժմանքներով՝ որ իրենց վերջին տաղնապի մէջ ըլլալին կը յըցունեն : բայց այս միջոցիս զլսաւ որ ինն նշան մը տուածին պէս, մէկէն ի մէկ իրենց ողբը կը կարեն, և յանկոտը իրենց խոր արտմութիւնը արտաբերան կը մտնուի և կ'ըսկոյն իրենց յաղթանակը զոհել բարբարոս ստիան ու բախութեամբ : գերիներուն վիճակը տակաւին որոշ չէ, ձեռքը հիմայ խորհուրդի կը նստին և անոնց վճիռը կը կարեն, սմանք տանջանք մահուան կը դատապարտուին որ յաղթողները իրենց վրէժը առնեն, ոմանք ալ հասարակութեանը նոյն կամ առջի պատերազմներուն մէջ իրենց կեանքը կորսնցուցած մարդկանց տեղը կը դրուին : Այս մեղմ բաղդին վիճակաւանները անոնց տաղաւարները կը տարուին որոնցմէ որ մեռած կայ :

(Շարունակելի :)

Ծագող : Պետրոս Առաք. Գ. Պատմանքից :

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՃ

Օգոստոսի 10 միայն :

Ինչպէս աստղերն ու կողմնացոյցը (բաւալը) նաեւ զգուցեմք մեզ անանկ ալ գոյությունընէն ու միայն մարդկային կենացը բնական մէջ ուղի ըլլալ և անարժեք են մեզի : բայց աս մեծ ասարթերութիւնն կայ մէջմէն որ գոյությունընէն կը նմանին ան վաղ փութն և պայծառ տառապանք որ ոչ ոք պարզ և երկնքը պայծառ եղած ժամանակ միայն կրնան անարժեք մեզի : Իսկ միայն կը նմանի ճարտարարեւոտ կողմնացոյցի մը որ կ'առաջնորդէ մեզի թէ և օդը իրանակ և երկնքը թանձրածանակներով մեծ կուտ ըլլայ :

ԲՈՒՐՇՈՍԵՆՆ

« Բարեբաղբ իմ եւ ստաւար յաւերջի ինչն » :

ՍՈՒՆԱՐԱՐ խօսք մը շատ ան.
գամ կրկնելով զուրցելը մեծապէս ԿՍ.
Հունական թեան եւ երսիտապիտուէ,
կամ ան բանը ստատիկ փափազանք
ինչը բերու եւ իւր սրտին զգայմունքը
այն բանին վրայ յայտնելու նշան ըւ-
լալը ամեն մարդ գիտէ . ուստի ժամա-
նակ ժամանակ դոմուած են մարդիկ
որ այդ տեսակ հաղորաւոր անգամ
կրկնուելու խօսք մը ԿՐՈՎ ալ բացատ-
րելու համար տեսակ մը սղիւտակ հը-
նարած են կարճ ճամբով սնոր շատ ան-
գամ կրկնութիւնը իմացնել ուղիւով :


Ուրիշն ահա ԲՈՒՐՇՈՍՈՒՆՈՒ ալ ի-
րեն աննահանջիկ պարսք մը կր սեպէ
իր ճննդեան օրէն ղիսեպլ յաւերժա-
կան կեանք բարեմաղթել՝ թէ մեծա-

լու բարեբաղնեբուն, թէ արգոյ բա-
րեբարելեալը եւ յարգի ստորադրոյնե-
բուն, եւ թէ աշխատողներուն ու իւր-
նամատարներուն, որ զիրք ճնուցին եւ
ատկից ետքն ալ սղիտի սնուցանեն ու
մեծցնեն, ի յոյճ իրեն որսին անշափ
ԿՍՀԱՆՈՒԿԱԵՆ եւ երսիտապիտուէր .
Վասն որոյ հետեւեալ ցուցակովս 500,
000-000 էն ուեղի անգամ իր թոթովա-
խօս լեզուով կը կրկնէ ի խոր օրոտէ թէ
ԲԱՐԵԲԱԳԻՈՒ ԵՒ ՍՆԱՐԱՐ ՅԱԵՆԱԿԵՑՑԵՆ :

Յիրուի հետեւեալ աղիւսակս մի-
անգամայն հետարբքրութեան նիւթ
մըն է յարգի ընթել բոյսներուն, վասն
զի ցուցակին մէջ տեղի գլխադիր Բ
գրէն սխեւով 500-000-000 էն աւելի
ճամբով կը կարգացուի վերջգրեալ
խօսքս . ե գէպ ի որ կողմն ալ կար-
գալու ըլլոս չորս անկիւններուն մէ-
կուն վրայ կը վերջացունէ իր վերջին
ն գիրը : Եւոր բանի ճամբով կարգա-
ցուելուն հաշիւը ճիշդ գտած չեմք :

ն ե ց ց ե կ ժ ր ե ւ ա յ ք ր ա ր ք յ ա ւ ե ր ժ կ ե ց ց ե ն
ե ց ց ե կ ժ ր ե ւ ա յ ք ր ա տ ա ր ք յ ա ւ ե ր ժ կ ե ց ց ե
ց ց ե կ ժ ր ե ւ ա յ ք ր տ տ ա տ տ ր ք յ ա ւ ե ր ժ կ ե ց ց
ց ե կ ժ ր ե ւ ա յ ք ր տ տ ա տ ա տ ա ր ք յ ա ւ ե ր ժ կ ե ց
ե կ ժ ր ե ւ ա յ ք ր ա տ ա տ ա տ տ տ ա ր ք յ ա ւ ե ր ժ կ ե
կ ժ ր ե ւ ա յ ք ր ա տ ա տ ա տ ա տ ա տ ա ր ք յ ա ւ ե ր ժ կ
ժ ր ե ւ ա յ ք ր ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա ր ք յ ա ւ ե ր ժ
ր ե ւ ա յ ք ր ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա ր ք յ ա ւ ե ր
ե ւ ա յ ք ր ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա ր ք յ ա ւ ե
ւ ա յ ք ր ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա ր ք յ ա
ա յ ք ր ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա ր ք յ
յ ք ր ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա ր ք
ք ր ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա ր ք
ր ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա ր ք
ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա ր ք
տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա ր ք
ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա ր ք
ր ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա ր ք
ք ր ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա ր ք
յ ք ր ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա ր ք
ա յ ք ր ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա ր ք
ւ ա յ ք ր ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա ր ք
ե ւ ա յ ք ր ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա ր ք
ր ե ւ ա յ ք ր ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա ր ք
ժ ր ե ւ ա յ ք ր ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա ր ք
կ ժ ր ե ւ ա յ ք ր ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա ր ք
ե կ ժ ր ե ւ ա յ ք ր ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա ր ք
ց ե կ ժ ր ե ւ ա յ ք ր ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա ր ք
ց ց ե կ ժ ր ե ւ ա յ ք ր ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա ր ք
ե ց ց ե կ ժ ր ե ւ ա յ ք ր ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա ր ք
ն ե ց ց ե կ ժ ր ե ւ ա յ ք ր ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա տ ա ր ք

ԱՐԴԱՐՈՒՆ



ԱՐԴԱՐՈՒՆ Արարատեան պատ-
ուական լրագիրը այս անդամ իւր 378
երորդ թերթին մէջ Վարիզ զանա-
զան ուսմանընդերու և արուեստից
պարասող Հայազգի երիտասարդնե-
րուն ընդհանուր ցուցակը կը հրա-
տարակէ գեղեցիկ խորհրդածութիւն
ներով, որոնց կարգին մէջ կը անանուի
նաեւ Վարկոտեան Պողոս ուղնու ուրա-
րոյ երիտասարդին անունը, իսկ ան
քաղցրութարոյ և աղնիւ Պ. Պողոս
Վարկոտովիլ ուղբերկի խոհեմագարդ
և ուսումնաստենչ երիտասարդն է, որ
յարգապատիւ Սիսաբեան Վարդե-
բեւ աղայն 1846 ին Պոլսէջ բրած
ճանապարհորդութեանը ժամանակը
ազգասիրտական ոգւով Սիսաբեան վար-
ժարանին շինութեան անորէնութիւ-
նը ընելով, այս երիտասարդս ալ միւ-
սովական դպրոցէ մը ընտրած հետը
կատանգնուպոլիս բերած էր որ ազ-
գային կանանուոր դպրոցի մը մէջ
գիտցած քանի մը լեզուներուն և ուս-
մանընդերուն վրայ ուրիշներն ալ եզե-
ցընելով վերադառնայ իր հայրենեու
ցը մէջ ազգին զաւակները դաստիար-
ակելու, ասոր համար բերաւ մեր
Սուրբ Սահակեան վարժարանը դրաւ,
ուր տեղ միատեղ աշակերտեցանք զը-
րեթէ տարի ու կէս ժամանակ:

Այս միջոցիս մէջ իր գիտցած միւ-
սովական, լատինական, յունական,
գաղղիական լեզուներուն հետ հոյ-
կական, տաճկական, և անգլիական
լեզուաց և մամլեմամլիքական և աշ-
խարհագրական ուսմանց փրոյոր ալ
բաւական հմուտութիւն ստանալէն և
առջններն ալ բաւական զարգացընե-
լէն ետեւ սաստիկ թորացուութեան
մը հանդիպեցաւ, որուն համար բը-
ժիշկները վճռեցին որ օգափոխութե-
նէ և ճանապարհորդութենէ զատ ու-
րիշ ճար չըլլար, և որովհետեւ տախ-
ւին ուրիշ ուսմանընդեր ալ սորվելու
սաստիկ փափագը չէր թողուր զինքը
որ կիսկատար ուսմանընդ հայրենիքը
դառնայ, ուստի թէ իրեն և թէ վար-

ժարանիս յարգի հոգաբարձուաց
խնդրանոցը Վարկոտը բարեհաճե-
ցաւ անորինէլ որ Փիղա երթայ, և
հոն բաւական աղէկնալէն ետեւ Փա-
րիզ անցնի իր փափաղները լեցընելու:
Բայց քանի որ մեկնեցաւ մենէ և ոչ մէկ
գիրը առինք թէ իր սրախտութեանը
վրայս և թէ խոստմանցը՝ որ ըրած էր
մեկնած օրը, ուրեմն ահա այս ան-
գամ մասնաւորապէս Վարկոտանիս
միջոցաւ (որուն հրատարակմանը եր-
բեմն ինքն ալ ջանադիր և խորհրդա-
կից էր) կը յայտնենք անոր գեղագոր-
ծութեան արհեստին մէջ ցըցուցած
զարգացմանը վրայ անշափ ուրտիտ-
թիւննիս, և կը խնդրենք որ անշուշտ
աս մեր յօդուածը կարդացած ժամա-
նակը յիշէ ան սերտ կապերը որով
սիրաներնիս իրարու հետ կապեցինք,
և առանձին գրութեամբ կատարէ ը-
րած եղբայրական և ընկերական բա-
րի խոստմանընդերը:

ԻՆՎԵՍՏԻՄԵՆՏԻՆ

ԴԵՂԱՆԻԿ

ԴԵՂԱՆԻԿ կամ քանարեան թրու-
չունը որուն սր տաճկները կը քանդա-
նարիս ու պինտ աւառ ան կղզներուն
յատուկ էր որոնցմէ սա անուեւս առ-
նուած է. կ'երեւայ որ այս թռչու-
նիս առաջին ծագումը Վիրիկէի ծու-
վեզերքը՝ Վանարեան կղզներէն և
զաւր լայն Վրոնց 29 զանազան տե-
սակները կը գտնուին, փետուրներնին
հասարակ գեղին են, եզել կամ պա-
կաս միսքաղցնի հետ խառնուած:
Գեղձանիկը ընկերական թռչուն մըն
է և ընտանի, տիրօջը յարելու շատ
յարմարութիւն մը ունի, զիւրը իր-
նամոզին ուսերուն վրայ կը թառի և
իր ուտելիքը անոր ձեռքէն կամ բեր-
նէն կ'առնէ, նաեւ շատ ընդունակ
է տրտաքոյ կարգի խաղեր սորվելու:
1820 ին Վաղարշի մը 1 ծնունա 24
դեղձանիկ բերաւ, կ'ըսէր թէ ասոնց
ամեն մէկը 18 էն մինչեւ 25 տարե-

կան էին, ուսանցմէ ոմանք գլուխներն
գէտայ ի վար ուսերնուսն վրայ կը կախ-
ուէին, իրենց ստուընները և սրջերը
օղին մէջ տարածած, սմանք ալ ինքի-
րերնուն կը կախուէին սեւասի մը թաւ
շուանի վրայ, երեսները կամ կռնակ
ները. թաւընին մէկը գնաւովով մը
զարնուածի մը պէտ իբր կիսամեռ վար
քնկաւ և իր ընկերներէն մէկը սպ-
րակի մը վրայ դրու գանիկայ և քա-
շեց տարու, և ալ ասանց պէտ զանա
զան գեղձանիկի խողեր պտտմուած
կայ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԸՌՈՂ, ՉՈՒԹԻՒՆ

Թէ ինչպէս գէտէ է նոր ինչդասած մարդ
ստոր ջայընէ:

ՂԱՆ՝ պէտք է որչափ որ կարելի
է նէ մարմինը շուտով ջրէն հանել կամ
թէ որ կախուած է նէ շուանը կտրել,
վերջապէս մահ պատճառող ամեն բա-
ներուն առաջը սանել, թէ որ աս ըդ-
գուշութիւնը շուտով ի գործ դրուի
բաւական կ'ըլլայ դժբաղդին կեանքը
ազատելու. բայց դժբաղդաբար աս
բանը շուանով կախուածներուն հա-
մար միշտ չի յաջողիր, խղաւածնե-
րուն համար անոնի կը կարծեմ կ'ըսէ
Վրքիկէնէս Սաւանթիօր թէ զանանք
շուտ մը ջրէն հանելու միջոցները կա-
տարելը զանանք ստորջայընէրու հա-
մար ի գործ դրուելիք ուրիշ ամեն
կերպերէն տղէկ է. շատ մարդկանց աս
ամենահարկաւոր գործին սեղ անյար-
մար և վնասակար կերպեր գործածելը
տեսնուով և աս բանիս վրայօք ա-
մեն անասկ ընկերութեանց մէջ որ-
չափ նախապաշարմունքներ. բլլալը
դիտելով պէտք չէ զարմանալ աս տե-
սակ պարագաներու մէջ քիչ մարդ
ազատելուն վրայ, ինչու որ շատ տեղ
ջրէն հանելուս պէտ կ'սկիւրին գլխի
վայր կախել և գժբաղդին օտարներուն
այնչափ կը զարնեն որ ինչզք թէ որ

մեռած ալ չըլլայ կը մեռնի, ինչու որ
կրակներուն մէջ գտնուած արիւնը
ըզեղին մէջ կուգան կը ժողովն և
աս ալ բժիշկներուն հաստատուն և
հաւաստի սկըզբ մանր գէմ է «գլուխդ
զով բռնել, փորդք բարեխառն և սա-
քրդ տայ»:

Բ. Տարէն հանելէն կամ շուանը
կտրելէն ետքը պէտք է խկոյն գժբաղ-
դը մերկայցնել, և մարմնոյն ամեն մա-
սերուն մէջ տաքութիւնը զօրացնե-
լու ջանալ. վրան պի կեանքը գրգռող
ներուն մէջէն ամենէն առջինը և պինտ
զօրաւորը տաքութիւնն է. ուստի
գժբաղդին կեանքը ազատելու համար
թէ որ կարելի է նէ գաղջ բաղնիքի մը
մէջ գնել, թէ որ տախիկայ չի գտնուի
նէ կրնանք ասոր տեղը մանիք, աւաղ
և բաւական տաք ծածկոցներ կամ
մարմնոյն զանազան մասերուն վրայ
ասոր քարեր կամ տաքուցած կղզին-
տը (թուղլայ) դնել. թէ որ աս կեր-
պը զանց առնուի ուրիշ ամեն միջոց-
ները անօգուտ կ'ըլլան. շատ տղէկ
կ'ըլլայ շուանը հասած մարդիկներն
ալ վերի քառաներնուս պէտ տաքը-
նել քան թէ զանիկայ նեղել սովորա-
կանին պէտ արեան սրուակներով, քը-
տակ (քէօն) քսելով, բաւալով, և տաք
տեղերու մէջ ամփոփել զանանք որչափ
որ կարելի է:

Գ. Վիկէց ետքը ամենահարկաւոր
բանը թորին մէջ օգ տալն է. տախիկայ
ի գործ դնելու համար պէտք է փութ
(քէօրիկ) մը և յարմար խողովակներ
գործածել, և ոչ թէ բերնով կամ
խողովակի մը մէջէ փչել: Վրան զի
կենդանի մարդու մը շնչած կամ բեր-
նէն հանած ողբ փոխուած և քիչ գըր-
զըւող է:

Դ. Վիկէ կ'ըլլայ թէ որ բաւական
բարձրութեամբ տեղէ մը ստամբօրին
խոր տեղին վրայ քանի մը կաթիլ պաղ
ջուր կամ գինի կաթեղները վրան
զի աս ամենապարզ կերպը միշտ սիր-
տը զօրացնելու շատ օգուտ ունի:

Ե. Պէտք է խղանսկաւ ձև քերտին
դարձապարնին, երակներնին և կռնակ
ներն շփել պինտ զգայուն կողմերը խող-
ակել, գրի մը փետուրով սուսող կամ

պարանոցը խաղտել, ուսնդին տակը քիչ մը անուշադոր, աչքերուն աւջին վառած մամ, և ականջներուն քով բարձր ձայն հանող բաներ դնել:

Զ. Թէ որ սրինգ մը գտնուի նե պէտք է գրեթէ ընել թէ ծխախոտի կամ մանանիկոյ եփով թէ ջուրի և քոցախի կամ գինիի խառնուրդով:

Ե. Կարոր աս միջոցներով կենաց քանի մը նշան տեսնուի, պէտք է հիււանդին բերանը դառ մընաղէի գինի լեցնել, իսկ թէ որ կըլէ՝ գործնաւ շուտով քանի մը անգամ շարունակել և թէ որ հարկաւորին կրնայ գինիին անդ երեք մաս ջուրը և մէկ մաս օղին իրար խառնելով խմցնել. աս սարգ կերպերը որ ամէն մարդ կրնայ առանց երկիւղի գործածել թէ որ պէտք եղած ժամանակը գործածուի նէ՝ կէս ժամ ետքը գործածուած արուեստական պինտ ճարտար գուրմաններէն աւելի օգուտ կը ծագէ. աս բաներուն համաձայն հոս մէկ սրբաւարձ պատմութիւն մը կը գնենք:

Մէկ գեղացի մը իր շորս տարուան տղան ջուրին մէջ գտաւ որ կէս ժամի չափ կեցած էր. աս տղուն բոլոր մարմինը կապուաւ և պինտ էին և ամեն տեսողները զանիկայ մեռած կը կարծէին և ամենեւին մէկը չէր համար ձակեր անոր օղնութիւն մը ընելու. մէկ աիկին մը որ հոն ներկայ էր ու գեղով խիտն Վթհա պարտին բժիշկ Տօթթօր Պրիւքներ անուն երկրնէն լքած՝ կերպերուն զօրութիւնը փորձել շատ աշխատութեամբ տղուն բերանը բացաւ ներս դադած աղտեղութիւնները պարպելու համար. զգեստները պոտուելով զոնի մերկացուց և մարմինը գաղջ ջուրի մէջ դնելով կամայ մը շփեց և թին տակը անուշադոր շիւ մը դրաւ, երեք քառորդէն ետքը շրթունքներուն վրայ քիչ մը կարմրութիւն եկաւ և բերնին բոլորով թեթեւ շնչին մը եղաւ. անտուեմը արդան բաւական սաք անկողինի մը մէջ դնելով տաք կաւաններով մարմինը և գարշադարները շփեց, երկու ժամէն ետքը տղան կենդանացաւ, ուստի փրկեցուցիչ դեղեր խմցնելով և քանի

մը հեղ երկուցի ջրով գրեթէ ընելով անտան որ չէր տաքնար, մէկ գերան ձի մը քով օրոտ կեցուցին, աս կերպերը մեծ յաջողութեամբ մը լինցան, տղան շուտ մը շունչ առնել սկսաւ, փոխեց և շուտով կատարեալ առողջացաւ:

Յարութիւն Պարէտ Ե. Մագուտեանց:

ՈՒՍՈՒՄՆԵԿԱՆ

ԲՆԱԳՐՈՒՄԻ ԹԻՒՆ

Մարմնի յարակիցութեան վրայ:

ՄԱՐՄՆՑ՝ մակերեւոյթներուն մէջ տեղը եղած ձգողական զօրութեանը Յարակիցութիւն՝ կամ Յարակիցական զօրութիւն կրկին Սյա զօրութեանն առաջ եկող երեւոյթներուն զարմանալի և հետաքրքրական ըլլալուն վրայօք այս անգամ մէկ քանի օրինակ կը դնենք:

Միւշէնպօք գրեթէ երկու բթաւ չափ արամայիծով երկու հատ աղաւ կիւ գլանակ եռացող ջրին ջերմութիւնը չափ տաքցնելէն ետքը, քիչ մը ճարդ քօելով անտաւ որ անանկ իրարու կը յարին որ 150 քիտր ծանրութեւն ու պէտք է զանոնք իրարմէ զատելու համար. նմանապէս վերայգրեալ չափերով կապարէ երկու հատ գլանակ 175 քիտր ծանրութեամբ իրար կը յարեն և թէ որ գլանակները երկաթէ ըլլային՝ զօրութիւնն ալ 300 քիտր կ'ըլլար:

Մարթէն իր Իրիտանիան Ժիլիտիա յաթիւնը մէջ կ'ընէ որ գրեթէ մէկ մէկ քիտր կընող կապարէ գնտակներու վրայ զմեքով մէկ մէկ բոլորակ կորեց, որոնց մակերեւոյթը մէկ բթաւ չափի բաւականին մէկ երրորդն էր, ասոնք տղէկ մը կարգնէլէն և աստիկ կերպով ճնշելէն ետքը տեսու որ անանկ իրարու յարերեն, որ 150 քիտր ծանրութեամբ չէ կրկնէր զանոնք իրարմէ:

ձեռք համար պէտք եղած ծանրութիւն յայտնի կ'ըլլայ, երբոր այն հաստատութեան մարմինը հեղուկէն առանց թորջուրէն կը զտուի: Իսկ թէ որ թորջուրէն ելլայ, անառնելի այն զորակը երկու ուրիշ տարրեր յորտեմանց բաղադրութիւն կ'ըլլայ. այսինքն հաստատութեան մարմնին և հեղուկին մէջ տեղի յարակցութեանը և նոյն հեղուկին մասանց մէջ եղած բաղադրութեանը:

Յորտեման Պարտ Ե. Մագնետանց:

ԲՆԱԼԱԲՈՒՆՈՒԹԻՒՆ

Բնալ-ծախան Ներգործութեանց բնութիւնը:

Ը ե խոյէ մարմիններուն մասանց ներքին բաղադրմանէն առաջ եկած և տոմասանց բաղադրմանը փոխվելէն կամ աւելցելէն ծագած ուրիշ նոր մարմիններուն երկայնքները, կաշտները, կերպերը, չափերը, համեմատութիւնները և տանց նման բաները բնալ-ծախանը կը սորվեցնէ:

Ինչպէս երբոր փայտ մը կտոր կտոր ընենք՝ որչափ որ մասաւորները փոքր ըլլան, գործելալ ամէն մէկ մասերը նոյն փայտին բնութիւնը կը ունենան, աս գործողութեանս մէջ միայն մէկ բնական զորութիւն մը՝ ի գործ դրած կ'ըլլանք. բայց երբոր ան փայտը կը բաժնին ներգործութեան մէջ դնելը, կը անսնանք որ կը շորնայ կը աաքնայ, կը փոփ և վերջապէս մալս մը և քիչ մը մախիր ձգելով կ'երի կը լինայ. ահա աս գործողութեանս մէջ փայտին բաղադրման մասերուն մէջ փոփոխութիւն մը պատճառեցաւ, այսինքն բնալ-ծախան կամ քիմիական ներգործութիւն մը:


Ղլեթէ բնական բոյր մարմինները պարզ կամ տարր ըստած մարմնաց մէկ քանիներուն հետ բաղադրված են որոնք իրարմէ բաժնելը բնալ-ծախան Վերլուծութիւնը՝ կը սորվեցնէ, և փոխադարձութեան ան պատճառ կամ բաժնուած պարզ մարմինները նորէն իրարու քով բերելով նախկին մարմինը շինելն ալ Բաղադրութիւնը կը սոր-

վեցնէ: Պարզ մարմին կամ տարր կը լինի ան մարմինները որոնք ուրիշ շտա մարմնաց մէջ կը գտնուին, և միանգամայն մինչև հիմա եղած բնալ-ծախանը չեն կրցեր անոնցմէ ալ ուրիշ տեսակ մարմիններ հանել. ինչպէս հին ժամանակները կը կարծէին որ տարրերը շոր հետ էին, այսինքն ջուր, օդ, հող և հուր. վստահ ասանց բաղադրեալ ըլլալը չէին գիտեր. ինչպէս որ անանկ տարրեր երկու կամ աւելի մարմին չէին կրցեր գտնալ որ այս ինչ գործողութեանը իրար խառնելով կարենային ջուր, օդ, հող կամ հուր շինել: Ի՞նչ զարմանալի տարրերութիւն նախնի և հիմալուան բնալ-ծախաց մէջ. ինչու որ հիմալուան բնալ-ծախանը փորձեցին և դատն որ ջուրը երկու պարզ կաղերէ կը բաղկանայ, այսինքն թթուածին և ջրածին. օդն ալ թթուածնէ և ուրիշ պարզ կաղերէ կը բաղկանայ՝ հողը հարցնեն այնչափ տեսակ է, որչափ որ հոնքային, բաւական և կենդանական նիւթերով բաղադրութիւններ կը ընայ ըլլալ, և այս հողին բաղադրութեանէն աւելի խառն և զանապառն բաղադրութիւն կը ընամ ըսել որ չի կայ. վերջապէս հուրը մարմին չէ, հասարակութիւն մասնաւոր տեղի մը մասանց շարժմանը ներգործութիւնը:

Ըհա մինչև հիմա գտնուած մարմնաց մէջէն բնալ-ծախան զատել չի կրցած մարմինները 55 հաս են, և չենք կրնար հաստատուել թէ ասկից ետքը բնալ-ծախանը չի կարենան աս տարրերը բաժանել, այսու ամենայնիւ որովհետեւ աս տարրերը բաժնութիւն օրէ օր շատնալու վրայ է, և աս շատնալը առաջի երեւոյթներէ առաջ կուգայ, անոր համար մարմնաց մասանց զանապառն կերպերով ունեցած դասակցութեանը նայելով հուանալիս է որ բուն տարրաց թիւը հիմալուանէն շտա պակաս ըլլայ. ինչ որ է նի ինչուան հիմայ բնական բոյր մարմինները աս տարրերէն երկուքին երեքին և այլն մէկտեղ միաշաղկն առաջ եկած են:

Յորտեման Պարտ Ե. Մագնետանց:

Թ ՈՒ Ե Ր Ը Ն ՈՒ Թ Ի Ւ Ն



ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

— 000 —

Սոփոյան բառախառնի խառնաբանայան :

Սամէմաթիքայի մէջ ժամանակ ժամանակ երեւելի մարդկանց մաադրութիւնները իրենց ձգող առարկաներէն մէկը եղած են Սոփոյան բառախառնի խառնաբանի ըստաւանները, որոնց վրայ զանազան ժամանակ այլ և այլ կարծիքներ ունեցեր են շատերը, բայց այս խառնաբանէն է որ ասով խորհրդաւոր և զորմանալի յատկութիւն մը կը տեսնուի թուաց վրայ :

Հասարակութեան մէջ շատերը գիտեն և շատ անգամ հանդիպած են որ իրարու կ'առաջարկեն թէ ինչպէս պէտք է մէկէն մինչև ինը եղանակով թիւերը ուղղահայեաց և հորիզոնական քաշուած աղիւսակի մը ինը միջոցներուն մէջ դասաւորել որ թէ վերէն վար, թէ բոլորի և թէ անկիւնէ անկիւն իրարու վրայ զարնես գումարը ըլլայ 15 և շարիւղան կերպը սորված կամ չիլ մը աստանդեղով դիւրաւ կը գրուեն և կը շարեն, բայց շատերը չեն գիտեր թէ պատճառը ինչ է, ինչպէս :

2	9	4
7	5	3
6	1	8

Ես ասանկ կ'ըլլայ բայց ինչէն է, և հետզհետէ կարգաւ չորս, հինգ, վեց, եօթը, ութը, ինը, տասը, տասը և մէկ և այլն դաւաղաններու բաժնուած աղիւսակներու մէջ իրենց բռնական կարգաւոր այս ինչ թիւերը ինչպէս պիտի կարգադրուին և անոնք դիւրութեամբ ընելու համար ինչ կարգ և կանոն պիտի ունենանք, շատերուն անծանօթ է, օրինակի համար ահա այս անգամ կ'առաջարկենք հետաքրքիր ընթերցողաց ասանդակ երկուքը այսինքն թէ 1 էն մինչև 64 և 1 էն մինչև 121 թիւերը ինչպէս պի-

տի կարգադրուին ութը և տասն և մէկ գաւաղաններով բաժնուած երկու քառակուսիներուն կամ աղիւսակներուն մէջ որ աւանձնակի երկուքին ալ թէ ուղղահայեաց, թէ հորիզոնական և թէ տրամանկեան գումարները հաւասար ըլլան և թէ ընդհանուր գումարին ինչ պիտի ըլլայ :

Հ Ե Ն Ե Ւ ՈՒ Կ

— 000 —

Հոսի յուսով Աշտ Դուռ Դամբա՝
 Կա ող ասոց պէս աղքատ ու փաւթամ :
 Կը սիթին ցիւ միւ հաճախ ինքնով :
 Կանկ ալ նորոց շատերն շատ կերպով :
 Հիմնքէն հին եւ միտքով յոյս նոր :
 Կեն ողջ է եւ շիւղ յունս որ :
 Գաւառութեանց կարգով հարաւոր մ' է մ' :
 Կոթն հրաշալիաց կարգէն ալ դաւա չեմ' :
 Աշտմէն յաւալ թէ քաղաքս կար :
 Ես եւ տն անդա շա հիւ մի միտքսար :
 Իսկ մարդկան հարցն ընտելիւնս փոխեց :
 Անկեղանս քաղաքս ողջ պարգեւեց :
 Հարաք թէ ըստս անանկի քան չեմ' :
 Ինչէն ի՞նչ եղաւ ես ալ չուրեմ մ' :
 Բայց յատկութիւններս կուրեմ թէ զուրջել :
 Գեթ զու կարեւորս ի՞նչ ըլլաւ զստեղ :
 Թուիս եւ մա սարսուղ, մէկ ու բազմութիւն :
 Եարտնակ թուղ ու թիւեւանս արծիւ :
 Ես և Լիւնաս շատաւս գիտութեանց :
 Երեսն արդունդէ երկուքս էմք ծնած :
 Ամեն մարդ հեռուստ երկմանս ձայնս աւան :
 Ծննդեանս յորայն մտալն անկարկուն :
 Դատերն իրարէկ բայց յուսակորած :
 Կարծէին ինքնին թէ' եւ' ողջըացած :
 Բաւերս ըստուով Լաւի թիւարեքս
 Յուով աւետից ծննդեանս օրերն :
 Յերկուտ յաւ քաղեց մայրս Էրեք տարի :
 Ողջ ծնաւ զիս ոչ հիւշ անմոռելի :
 Եւ եւ չեմ' ի մարդկանց զի չեմ' բանական :
 Բայց խաղմ գնած ուսմ' իտանազան :
 Եւ ոչ ընաւոր կենդանի պազան :
 Եւ զերթ կենդանուց չե իմ գործարան :
 Բայց ըստ ընտելեանս մէկ զլուիս մ' ունիմ :
 Դեմքերս աւելի քան զտունս թուին :
 Ողջ Արարողաց զերթ ասորս թեւան :
 Սուր անկեղով ինքն ու իստան :
 Անուս անկեղանս ես իմ փառաւան :
 Գաղաթ քաղաք անդէ անդ ժաման :
 Միտն մէկ հաս մ' եւ' երկու չեմ ըլլալ :
 Ունիմ շատ ընկեր մէկ քանի եղբայր :
 Չեմ յուսին պաշտաւս այլ նորիմ հիմնամ' :
 Զի մեռնիմ անդը նոր մի կ'երեւամ' :
 Կամ զերթ փիւնիկ հաւ նորեւոր ծնանիմ' :
 Ես զիս յաջորդեմ' թէ և չեմ անիմ' :